ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025թ նոյեմբերի 16

«ՀԱՅԱՔՎԵ» դիտորդական առաքելության

ԶԵԿՈՒՅՑ

ՆԱԽԱԲԱՆ

«Հայաքվե» դիտորդական առաքելությունը ձևավորվեց «Երիտասարդական ակումբների դաշնություն» և «Արարատյան սերունդ» ՀԿ-ների կողմից՝ դիտորդական դաշինք կազմելու միջոցով: Այն ԿԸՀ կողմից գրանցվեց 2025թ. հոկտեմբերի 27-ին: Գրանցվելուց անմիջապես հետո սկսվեց տեղական դիտորդների գրանցումը սահմանված կարգով, ինչպես նաև նախընտրական փուլի դիտարկումները Վաղարշապատ համայնքում՝ երկարաժամկետ դիտորդների օգնությամբ: Որոշվեց քվեարկության օրը՝ նոյեմբերի 16-ին, խոշորացված համայնքի 47 ընտրական տեղամասերից յուրաքանչյուրում ունենալ 2 դիտորդ, ինչպես նաև կազմավորել փորձառու դիտորդների արագ արձագանքման շրջիկ խմբեր:

Վաղարշապատ համայնքի ՏԻՄ ընտրությունների նախընտրական փուլի դիտարկման արդյունքում արձանագրել ենք մի շարք խնդիրներ և խախտումներ, որոնք գնահատվում են որպես ՀՀ Ընտրական օրենսգրքի (ԸՕ) դրույթների, ինչպես նաև ընտրական գործընթացների թափանցիկության և հավասարության սկզբունքների խախտումներ:

Վաղարշապատ համայնքը բաղկացած է 19 բնակավայրից, և արձանագրված խնդիրները վերաբերում են ինչպես քարոզչական նյութերի տարածմանը, վարչական ռեսուրսի կիրառմանը, այնպես էլ ընտրական գործընթացների հավասարության և քաղաքական չեզոքության ապահովման սկզբունքներին: Քվեարկության օրը կատարված մեծածավալ աշխատանքի արդյունքում «ՀայաՔվե» դիտորդական առաքելության կողմից ներգրավված 123 դիտորդները (որոնք ՀայաՔվեի կողմից նախապես վերապատրաստվել էին ու հավաստագրվել որպես անկախ դիտորդներ) արձանագրեցին հետևյալ ընտրախախտումները:

Ա. ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

- Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի պահանջով համայնքի ղեկավարները պարտավոր են ապահովել քարոզչական պաստառների տեղադրման համար հավասար հնարավորություններ: Սակայն միավորվող նախկին Վաղարշապատ համայնքում ընդամենը 9 և նախկին Խոյ համայնքի յուրաքանչյուր գյուղում՝ մեկական վահանակներ էին տրամադրվել, որոնք փաստացի չէին կահավորվել: Ակնհայտորեն դրանք բավարար չէին մասնակից կուսակցությունների համար՝ իրենց քարոզչական նյութերի տարածման և ընտրողներին իրազեկելու համար:
- Դրա հետևանքով գրեթե բոլոր կուսակցությունները /դաշինքը ստիպված են եղել պաստառները փակցնել չնախատեսված վայրերում, ինչը դիտվել է նաև որպես մրցակիցների կողմից կարգավորումների անտեսում: Մեր դիտորդները արձանագրել են նաև պաստառների փոխադարձ պատռման, փչացման և փոխարինման դեպքեր:
- Չնախատեսված վայրերում ամենաշատը հանդիպում էին Քաղաքացիական պայմանագիր կուսակցության և Հաղթանակ դաշինքի թեկնածուների, մասնավորապես, համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արգիշտի Մեխակյանի և Սևակ Խաչատրյանի պաստառները:
- Պաստառները փակցվել են օրինակ՝ ՀԷՑ-ի ենթակայանների (շինության) պատերին, էլեկտրասյուներին, տեղադրված հաշվիչների մետաղյա արկղերին, փողոցում տեղակայված գազաբաշխիչ կետի մետաղյա կարկասի, կանգառների սպասասրահների պատերին, ճանապարհային երթևեկության նշանների ու ցուցատախտակների հետևի մասերում և այլն: Մեծ թիվ էին կազմում նաև առանձնատների, ցանկապատերի, հասարակական նշանակության օբյեկտների՝ ավտոսպասարկան սրահներ, խանութներ և այլն վրա փակցված մեծ և փոքր պաստառները: ՔՊ կուսակցության թեկնածու Արգիշտի Մեխակյանի նկարով պատկերված ցուցապաստառները աչքի էին ընկնում ոչ միայն առատությամբ, այլև իրենց չափերով:
- Նշված խախտումների վերացման պարտականությունը Ընտրական օրենսգրքով վերապահված է համայնքի ղեկավարին և համապատասխան թ14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին, սակայն արձանագրել ենք, որ այդ մեխանիզմները առավելապես չեն կիրառվել:
- Մամուլի հրապարակումների համաձայն՝ Էջմիածնում ՔՊ կուսակցության քարոզչական պաստառները տեղադրվել են համայնքային կոմունալ

ծառայությունների աշխատակիցների միջոցով՝ համայնքային տեխնիկայի ներգրավմամբ, ինչը ԸՕ 23-րդ հոդվածի խախտում է:

Բ. ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

- Խոյ համայնքում ընտրությունների նախաշեմին արձանագրվել է հողերի նպատակային նշանակության փոփոխությունների և արտոնությունների տրամադրման որոշումների կտրուկ աճ: Այս երևույթը դիտարկվում է որպես վարչական ռեսուրսի օգտագործման ձև[1]:
- Խոյի համայնքապետի պաշտոնակատար Լյուդվիգ Յայլոյանի որոշումները՝ արտաքին գովազդի տեղադրման մասին, պետք է պարունակեն հասցեներ, սակայն որոշ դեպքերում դրանք բացակայում էին, ինչը օրենքի խախտում է[2]:

Գ. ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

- Մի շարք ընդդիմադիր քաղաքական ուժեր՝ մասնավորապես **Մայր Հայաստան**, **Հաղթանակ** և **Հայրենիք**, ահազանգել էին, որ մարզպետարանի և համայնքապետարանի կողմից իրենց մերժվել է քարոզչական հանդիպումների համար դահլիճների տրամադրումը: Միևնույն ժամանակ դրանք նույն ժամերին տրամադրվել են ՔՊ կուսակցությանը:
- Այս իրավիճակը խախտում է ԸՕ 19-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով ամրագրված հավասար հասանելիության սկզբունքը:
- Մերժումների մի մասն ունեցել է ձևական պատճառաբանություններ՝ օրինակ, դիմումը ներկայացվել է 4 ժամով դահլիճը օգտագործելու համար, մինչդեռ օրենքը սահմանում է առավելագույնը 3 ժամ: Մեր կարծիքով նման մերժումները հակասում են վարչարարության օրենսդրական սկզբունքներին և փաստացի սահմանափակում են ընտրողների և ընտրությունների այլ սուբյեկտների քաղաքական իրավունքները:

---

1 https://khoy.am/Pages/DocFlow/Def.aspx?g=e486da09-f411-4d62-af5e-6750cfe8bc45&a=d&dt=CouncilorDecision

2 https://khoy.am/Pages/DocFlow/Default.aspx?dt=Voroshum

Դ. ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՎՆԱՍՈՒՄ

- Քարոզչական պաստառների փոխադարձ վնասման դեպքերն ունեին համակարգային բնույթ: Վնասվում էին միաժամանակ մի քանի կուսակցությունների նյութեր՝ առանց իրավապահների պատշաճ արձագանքի:
- Չնայած ԸՕ 21-րդ հոդվածի 7-րդ մասի և ՎԻՎՕ 40.11 հոդվածի պահանջներին՝ նման դեպքերով վարչական վարույթներ չեն նախաձեռնվել, և պատասխանատվության միջոցներ չեն կիրառվել:
- Այս անպատժելիությունը նպաստում էր մրցակցային անհավասարության խորացմանը:

Ե. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏՄԱՆ ԱՀԱԶԱՆԳԵՐ

- Մեր երկարաժամկետ դիտորդները ստացել են ահազանգեր համայնքային և պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների՝ քաղաքական դրդապատճառներով աշխատանքից ազատման մասին: Մասնավորապես, Հաղթանակ դաշինքի Թեկնածու Սևակ Խաչատրյանի պնդմամբ Վաղարշապատի ղեկավարի պաշտոնակատար Արգիշտի Մեխակյանն իր ազգակցին, ով Ծիծեռնակ մանկապարտեզի տնօրենն է, առաջարկել է ազատման դիմում գրել, մեկնաբանելով, թե իրենք գտնվում են հակադիր ճամբարներում:[3]

Զ. ԸՆՏՐԱԿԱՇԱՌՔ ԵՎ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

- Արձանագրվել են տարբեր քաղաքական ուժերի ներկայացուցիչների մասնակցությամբ հնարավոր ընտրակաշառքի դեպքեր: Ահազանգեր են ստացվել նաև սոցիալապես խոցելի խմբերին և Արցախից տեղահանված անձանց օգնություն ցուցաբերելու դեպքերի մասին՝ ընտրական

3 Հաղթանակ դաշինքի ներկայացուցիչ Սևակ Խաչատրյանի հարցազրույցը Civic.am-ին:

նպատակներով[4]: Հակակոռուպցիոն կոմիտեն քրեական վարույթ էր նախաձեռնել ՀՀ քրեական օրենսգրքի 221-րդ հոդվածի հատկանիշներով (Հանրաքվեի կամ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելը): Հոկտեմբերի 21-ին, համայնքի գյուղերից մեկում (Դողս) ՔՊ կուսակցության մի շարք թեկնածուների մասնակցությամբ տեղի է ունեցել բարեգործական միջոցառում, որի մասին հրապարակել է լրագրող Լիա Սարգսյանը: Միջոցառման ժամանակ համայնքի բազմաթիվ բնակիչների տրվել են արժեքավոր նվերներ[5]:

- Նոյեմբերի 5-ին հրապարակված տեսանյութում Խոյ համայնքի Գեղակերտի դպրոցի տնօրեն և ընտրական հանձնաժողովի նախագահ Անուշ Համբարձումյանը բաժանում է բարեգործական փաթեթներ՝ միաժամանակ հանդիսանալով ՔՊ կուսակցության անդամ: Այս արարքը պարունակում է ՀՀ Քրեական օրենսգրքի 221-րդ հոդվածի հատկանիշներ՝ որպես նախընտրական փուլում բարեգործության ձևով ընտրակաշառք[6]:
- Քաղաքացին խոստովանել է, որ համայնքապետի պաշտոնակատար Ա. Մեխակյանը նախընտրական շրջանում կազմակերպել է թոշակառու տատիկի տան կտուրի վերանորոգումը: Լրագրողի հարցին, թե ո՞ւմ եք ընտրելու, տատիկը պատասխանում է՝ Արգիշտի Մեխակյանին[7]:

Է. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

- Ըստ ԿԸՀ ներկայացված հայտարարագրերի՝ որոշ կուսակցությունների (օր.՝ **Հայրենիք**, **Ժառանգություն**) նախընտրական հիմնադրամներին փոխանցումներ են իրականացվել ֆիզիկական անձանց կողմից, ինչը չի թույլատրվում և հակասում է օրենսդրությամբ սահմանված դրույթներին (ԸՕ 2024թ դեկտեմբերի փոփոխություններ և լրացումներ):
- Այս նվիրատվությունները պետք է վերադարձվեն, իսկ համակարգային մակարդակում անհրաժեշտ է հետագայի համար ԿԸՀ կողմից ներդնել

4 https://kizaket.com/news/882254 ,

5 Էջմիածնում ՔՊ-ի խախտումներով հարուցվեց քրեական գործ. կոմիտեն հաստատեց | Armlur – Լուրեր Հայաստանից, https://armlur.am/2025/30,

6 Դպրոցի տնօրենի նկատմամբ խափանման միջոց կիրառվել է տնային կալանքը | Radar Armenia, https://radar.am/hy/news/social-2725528392/#:

7 Makaryan news, Makaryan News – Telegram

ինքնաշխատ վերահսկողության մեխանիզմներ՝ կանխելու համար ապօրինի մուտքերը և սահմանաչափերի գերազանցումը:

Ը. ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀԱՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ

- Արձանագրվել են դեպքեր, երբ տարբեր քաղաքական ուժերի միջև վեճերի պարագայում ոստիկանության արձագանքը քարոզարշավի ընթացքում եղել է ընտրովի: Որոշ դեպքերում կիրառվել են կալանքներ, որոնք դիտվում են որպես անհամաչափ և քաղաքական դրդապատճառներով պայմանավորված: Մասնավորապես, մենք արձանագրել ենք Մայր Հայաստանի աջակից բլոգերի, Ամենայն Հայոց Կաթողիկոսի եղբոր որդու հետ կապված միջադեպերը:
- Նման գործողությունները ոչ թե կանխարգելում էին լարվածությունը, այլ հակառակը՝ սրում առանց այդ էլ բևեռացված քաղաքական մթնոլորտը:

Թ. «ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ» ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

- Քարոզարշավի վերջին շաբաթվա ընթացքում գործող իշխանությունների հետ փոխկապակցված civic.am կայքը հրապարակել է «հեղինակավոր սոցիոլոգիական հարցման արդյունքներ», որով Վաղարշապատի ընտրությունների ընդգծված առաջատարն է ներկայացված ՔՊ թեկնածու Արգիշտի Մեխակյանը: ՀՀ Ընտրական օրենսգրքի 22 հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «Թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների վարկանիշների վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքներ հրապարակելիս հարցումն իրականացնող կազմակերպությունը պարտավոր է նշել հարցման ժամկետները, հարցվողների թիվը և ընտրանքի ձևը, հավաքման ձևը և վայրը, հարցի ճշգրիտ ձևակերպումը, հնարավոր սխալի վիճակագրական գնահատականը և պատվիրատուին:» Տվյալ դեպքում դա չի հրապարակված, ինչը օրենքի կոպիտ խախտում է:

Ժ. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

- Մի շարք ընտրատեղամասերի անմիջական հարևանությամբ հաճախ են առաջացել քաղաքացիների չթույլատրված կուտակումներ: Այդպիսի կուտակումներ մենք արձանագրել ենք 04, 10, 16, 17, 28, 29, 37, 38, 39, 45, 47 ընտրատեղամասերի դիմաց, ընդ որում ոստիկանությունը հաճախ անուշադրության է մատնել դրանք, իսկ մեր հորդորներով ցրելուց հետո դրանք շատ արագ վերականգնվել են, ընդ որում ակնհայտ էր այդ կուտակումների կողմից ընտրությունների գնացող քաղաքացիների վրա իրականացվող ներգործությունը: Փաստացի, մենք արձանագրել ենք այն իրողությունը, որ թեև Ընտրական օրենսգրքի 22 հոդվածի 3-րդ կետով արգելվում է քաղաքացիների և մեքենաների կուտակումը ընտրատեղամասերի հարևանությամբ, օրենքի այս պահանջը խախտելու համար շոշափելի իրավական պատասխանատվություն նախատեսված չի, և այդպիսի կուտակումներ պարբերաբար առաջանում են, ընդ որում հաճախ ընտրողների կամքի վրա ներգործության ընդգծված միտումով:
- Կուտակումները եղել են նաև տեղամասերի ներսում, որոնք հաճախ նեղ էին և վատ հարմարեցված ընտրական գործընթացը կազմակերպելու համար: Մասնավորապես, այդպիսի իրավիճակ էր 28, 32, 34, 35, 38, 45, 47 տեղամասերում: Որոշ տեղամասերում նույնիսկ պարզապես տեղաշարժվելն էր շատ դժվար: Արդյունքում խախտվել էր ՀՀ Ընտրական Օրեսգրքի 57-րդ հոդված 2-րդ մասը, որի համաձայն «Քվեարկության սենյակը պետք է լինի հնարավորինս ընդարձակ և բավարարի հետևյալ պահանջները.

  - հնարավորություն ընձեռի քվեարկության ողջ ընթացքում ապահովելու տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների, մասնագետի և քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների, մասնագետների, քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց) կանոնավոր աշխատանքը.

  - հնարավորություն ընձեռի տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներին, ինչպես նաև քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց իրենց տեսադաշտում պահելու տեխնիկական սարքավորումը, քվեատուփը, քվեարկության խցիկները (պայմանով, որ

չխախտվի քվեարկության գաղտնիությունը), քվեարկության խցիկներից մինչև քվեատուփն ընկած հատվածը»:

- Մենք բազմիցս ականատես ենք եղել բաց քվեարկության դեպքերի, երբ քաղաքացին փաստացի քվեարկում է ընտրախցիկից դուրս, կամ քաղաքացուն քվերակելուց մոտենում է մեկ այլ քաղաքացի և հուշումներ անում կամ ընտրական հանձնաժողովի նախագահը միջամտում է քվեարկության գործողությանը: Այդպիսի դեպքեր են արձանագրվել 10, 17, 28, 37, 38 տեղամասերում: Որոշ դեպքերում ընտրողները սմարթ հեռախոսով նկարահանել են սեփական քվեարկությունը՝ դրանով ևս խախտելով քվեարկության գաղտնիությունը: Մասնավորապես, այդպիսի խախտում է արձանագրվել 02, 12 ընտրական տեղամասերում: Նաև ականատես ենք եղել դեպքերի, երբ քաղաքացին մոտենում է ընտրական հանձնաժողովին, և պարզապես պահանջում է տրամադրել իրեն կոնկրետ համարի (որպես կանոն՝ 7) քվեաթերթիկը, ինչն ակնհայտ բաց քվեարկություն է հանդիսանում, մասնավորապես, 28, 45 տեղամասերում:
- Որոշ տեղամասերում եղել են դեպքեր, երբ քվեաթերթիկների տրցակը ոչ ամբողջական է տրամադրել, կամ տրցակում եղել են նույն համարի երկու քվեաթերթիկ 10, 34, 36, 38 տեղամասերում: 44-րդ տեղամասում արձանագրել ենք չմարված քվեաթերթիկների դուրսհանում:
- Մի շարք ընտրական տեղամասերի մոտ արգելված հեռավորության վրա եղել են փակցված գովազդային պաստառներ, մասնավորապես 10, 11, 13, 14, 18, 26, 41, տեղամսերի հարևանությամբ: Հատկանշական էր, որ 19 տեղամասում բացակայում էր ընտրատեղամասի համարը, որը պետք է տեսանելի փակցված լիներ մուտքի մոտ:
- Բազմաթիվ ընտրական տեղամասերում իշխող ուժի վստահված անձինք ընտրողների բացահայտ հաշվարկ էին վարում, առկա ցուցակներում նշելով ենթադրաբար իրենց օգտին քվեարկող ընտրողներին: Այդպիսի դեպքեր են արձանագրվել, մասնավորապես 01, 04, 05, 26, 32, 33, 36, 38 հաճախ նաև նրանք մոտենում էին ընտրողներին և ֆիքսում նրանց կողմից քվեարկությունը կատարելու փաստը: Թիվ 23 տեղամասում վստահված անձը տևական ժամանակ նստած է եղել քվեատուփի մոտ: Թիվ 2 տեղամասում վստահված անձը հանձնաժողովի անդամների հետ հավասար նստած է եղել սեղանի մոտ, որտեղ տեղի էր ունենում քվեաթերթիկների հաշվարկը:

- Որոշ ընտրատեղամասերի մոտ նույն մեքենաները բազմակի անգամ խմբերով ընտրողների էին բերում քվեարկության: Դա մենք արձանագրել ենք 02, 34, 44 ընտրատեղամասերում:
- Մի շարք տեղամասերում քվեախցիկները չեն ապահովել քվեարկության լիարժեք գաղտնիություն, դիտարկվել են հարակից պատուհանների միջոցով: Դա մենք արձանագրել ենք 13, 36, 46 ընտրատեղամասերում:
- Մի շարք ընտրատեղամասերում հանձնաժողովների նախագահները և քարտուղարները չեն արձանագրել վստահված անձանց, դիտորդների, լրատվամիջոցների ներկայացուցիչների մուտքն ու ելքը, մասնավորապես 08, 32 ընտրատեղամասերում:
- Բազմաթիվ ընտրատեղամասերում արձանագրվել է ընտրողների ուղղորդման դեպքեր, երբ նրանց վրա տեղի է ունեցել բացահայտ ներգործություն, կամ նրանք ընտրությունների են եկել այլ անձանց ուղղորդմամբ, որոնք փորձել են նրանց հուշել, թե ինչպես քվեարկել: Առավել ընդգծված է դա եղել տարեց մարդկանց դեպքում, երբ այլ անձինք, փորձելով պատճառաբանել ընտրողի ֆիզիկական սահմանափակումները, փորձել են նրա հետ միասին մտնել ընտրախցիկ, թեև հաճախ ընտրողը լիարժեք ընդունակ է եղել ինքնուրույն ընտրություն կատարելու, և կատարել է, երբ ուղեկցող անձի մուտքը արգելվել է: Այդպիսի խախտումների մեր դիտորդները ականատես ենք եղել 10, 17, 28, 37, 38 ընտրատեղամասերում:
- Մի շարք ընտրատեղամասերում ընտրական ցուցակների մեջ հայտանաբերվել են անձիք, որոնք չեն գրանցված և չեն բնակվում այդ հասցեներում: Այլ դեպքերում, անձիք, որոնք գրանցված և բնակվում են կենկրետ հասցեներում, չեն կարողացել հայտնաբերել իրենց անունները ցուցակներում: Այդպիսի խախտումների մենք ականատես ենք եղել 39, 43 ընտրատեղամասերում:
- Եղել դեպքեր, երբ ինքնասոսնձվող դրոշմանիշը տրամադրվել է առանց կտրոնը ստանալու, հաճախ իրականում կտրոնը դրված է եղել քվեարկության ծրարի մեջ, ինչը փաստացի բաց քվեարկության ևս մեկ ձև է, սակայն այդ քվեաթերթիկները վավեր են ճանաչվել: Այդպիսի խախտումների մենք ականատես ենք եղել, մասնավորապես, 02 ընտրատեղամասում:
- «Հին և բարի» ժամանակների ընտրությունների կազմակերպման փորձի ոգով երեկոյան ժամերին, երբ արդեն մութ է, հոսանքազրկվել է 2 տեղամաս՝ 08 և 13: Այդ ընթացքում, չնայած քվեարկությունը շարունակվել է, սակայն

դժվարություններ է առաջացրել ընտրողների համար, ազդել հանձնաժողովների աշխատանքի վրա:

- Ընտրական տեղամասերի զգալի մասում հանձնաժողովների նախագահները կամ լիարժեք չեն տիրապետել ընտրական օրենսդրությանը, կամ վստահ չեն եղել քվեարկության օրվա համար նախատեսված գործողությունների հերթականության վերաբերյալ իրենց իմացության վրա: Դա հանգեցրել է նրան, որ որոշ վստահված անձինք կարողացել են թելադրել իրենց կամքը և որոշակիորեն ուղղորդել հանձնաժողովների անդամներին՝ կատարելու իրավաչափության հետ կապված խնդրահարույց գործողություններ: Այդպիսի իրավիճակներ մենք արձանագրել ենք 28, 29, 30, 32, 37, 46, 47 ընտրական տեղամասերում:
- Ընտրողների զգալի մասը ընտրական գործընթացին և ընտրատեղամասում գործողությունների հերթականությանը լավատեղյակ չէին, ինչը լրացուցիչ դժվարություններ էր առաջացնում ընտրական հանձնաժողովների համար, շփոթության առիթ հանդիսանում: Մեր դիտորդները դա արձանագրել են բոլոր տեղամասերում: Շատերի համար ցանկալի կլիներ, որ ընտրողների համար պարզ ուղեցույցներ հատկացվեին:

ԺԱ. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, Վաղարշապատի ՏԻՄ ընտրությունների նախընտրական և քվեարկության փուլերի դիտարկումները ցույց տվեցին, որ ընտրական գործընթացը չի ապահովել մրցակցության հավասար պայմաններ, քվեարկության գաղտնիություն, վարչական ռեսուրսների չեզոք օգտագործում և իրավապահ համակարգի անաչառ միջամտություն: Արձանագրված խախտումների լայն շրջանակը՝ սկսած քարոզչական պաստառների տեղադրման անհավասար պայմաններից և ընտրակաշառքի դրսևորումներից մինչև քվեարկության օրվա ընթացքում բաց քվեարկությունն ու ընտրողների ուղղորդումը, լրջորեն ազդել են ընտրական գործընթացի թափանցիկության, արդարության և հանրային վստահության վրա:

Ամփոփելով, մենք գալիս ենք այն հետևության, որ 2025 թ. նոյեմբերի 16-ին կայացած ՏԻՄ ընտրությունները, թեև առերևույթ ազատ էին, սակայն տեղի են ունեցել քաղաքացիների ազատ կամքի նկատմամբ զանգվածային ներգործության և

համատարած բնույթ կրող խախտումների պայմաններում: Ընտրատեղամասերի դիմաց որոշակի քաղաքական ուղղվածություն ունեցող անձանց շարունակական կուտակումը, ընտրողներին խմբերով ընտրատեղամասեր բերելը, իշխող քաղաքական ուժի վստահված անձանց կողմից իրենց օգտին քվեարկող քաղաքացիների բացահայտ հաշվառումը և քվեարկության գաղտնիության բազմակի խախտումները, իրենց հավաքականության մեջ, թույլ են տալիս ենթադրել, որ այս ամենը կրել է կազմակերպված և միտումնավոր բնույթ, և նպատակ է ունեցել ներգործել քաղաքացիների ազատ կամքի արտահայտման վրա, ինչն իր բացասական ազդեցությունն է ունեցել ընտրությունների վերջնական արդյունքների և դրանց հանրային ընկալման վրա:

ԺԲ. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունում ընտրությունների դիտարկման արդյունքում «ՀայաՔվե» դիտորդական առաքելությունը առաջարկում է նախընտրական, քվեարկության օրվա և արդյունքների ամփոփման փուլերում անհրաժեշտ բարեփոխումներ՝ ուղղված ընտրական գործընթացների թափանցիկության, հավասարության, քաղաքական չեզոքության և ընտրողների ազատ կամքի ապահովմանը:

Մասնավորապես, օրեսդրության մակարդակում առաջարկվում է.

- Վենետիկի հանձնաժողովի ուղեցույցներին համապատասխան ամրագրել վարչական ռեսուրսի չարաշահման ամբողջական արգելք:
- Սահմանափակել ՏԻՄ ընտրություններին համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակված անձանց՝ նախընտրական ցուցակը գլխավորելու հնարավորությունը՝ այդպիսով կանխարգելելով վարչական ռեսուրսի հնարավոր չարաշահումը:
- Սահմանել առցանց գովազդի ֆինանսավորման հայտարարագրման գործունակ համակարգ:
- Սահմանել անմիջական պատասխանատվություն՝ ապատեղեկատվության և ատելության խոսքի տարածման համար:
- Նախատեսել կուսակցությունների կողմից տարեկան հաշվետվությունների և նախընտրական հիմնադրամներ կատարված նվիրատվությունների և դրանց

օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի առցանց լրացման մեխանիզմ՝ ապահովելու համար դրանց բաց հասանելիությունը:

- Ընդլայնել հայտարարագրվող ծախսերի շրջանակը՝ ներառելով շտաբների աշխատակիցների աշխատավարձերը, տրանսպորտային ծախսերը, գրասենյակային ծախսերը և այլն:
- Սահմանել քարոզչության սահմանափակումների հստակ կանոններ ընտրությունների նշանակումից մինչև քարոզարշավի սկիզբը ներառող ժամանակահատվածի համար:
- Իրական ֆինանսական աղբյուրների թափանցիկության ապահովման համար վերանայել մեկ անձի կողմից նվիրատվության վերին շեմը, իսկ 1 միլիոն դրամից ավելի նվիրատուների համար ամրագրել եկամուտների հայտարարագրման պահանջ:
- Ամրագրել տպագիր քարոզչական նյութերի զետեղման հստակ պահանջներ, ՏԸՀ-երի և ՏԻՄ-ի լիազորությունների հստակ շրջանակ, ինչպես նաև դրանց պարտադիր վերացման պահանջ՝ ընտրություններից անմիջապես հետո:
- Ամրագրել, որ ընտրական իրավախախտումների քննությունը իրականացնում են ՏԸՀ-ներն ու ԿԸՀ-ն՝ հստակ սահմանված ժամկետներով:
- Ընդլայնել օրենքով սահմանված՝ սոցիոլոգիական հարցման արդյունքների հրապարակմանն առնչվող պահանջները՝ տարածելով դրանք նաև հարցումների արդյունքները վերահրապարակող կամ լուսաբանող լրատվամիջոցների կամ ընտրություններին մասնակցող սուբյեկտների նկատմամբ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, Ներքին գործերի նախարարությանը, Տեղական ինքնակառավարման մարմիններին առաջարկվում է.

- Ապահովել տեղամասային հանձնաժողովների շարունակական վերապատրաստում (նաև հեռավար)՝ առնվազն տարին մեկ անգամ, ինչպես նաև պարտադիր ստուգարք՝ ՏԸՀ անդամության թեկնածությունը հաստատելու համար:
- Ընտրական հանձնաժողովների անդամների վերապատրաստումների և դասընթացների վայրերը դարձնել առավել մատչելի, իսկ նյութերը՝ հասանելի ձևաչափերով (ներառյալ՝ տեսաձայնային նյութեր):

- Մշակել և հրապարակել հանձնաժողովների համար նախատեսված ուղեցույցներ, կազմակերպել իրազեկում և ուսուցում՝ ընտրական ընթացակարգերի, թեկնածուների իրավունքների, քարոզչության սահմանափակումների և այլնի վերաբերյալ:
- Հստակեցնել յուրաքանչյուր տեղամասի սահմանները, ՏԸՀ-երի և ոստիկանների պատասխանատվության տարածքները՝ բացառելու համար ընտրական տեղամասերի անմիջական հարևանությամբ կատարվող ընտրախախտումները:
- Սահմանել 50 մետր արգելքի հաշվարկման միատեսակ մեթոդաբանություն՝ բացառելու համար ընտրողներին ուղեկցող կամ ազդող խմբերի՝ ընտրողների կամքի վրա ազդելու հնարավորությունը, այդ թվում՝ նորագույն միջոցների օգտագործմամբ:
- Հստակեցնել քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար համայնքի ղեկավարի կողմից անվճար տեղերի տրամադրման կանոնները՝ գործնականում երաշխավորելու ընտրություններին մասնակից կուսակցությունների հավասար հնարավորությունները:
- Ապահովել ընտրական բոլոր փուլերի և ԿԸՀ հրապարակած տեղեկատվության հասանելիությունը բոլոր ընտրողների, հատկապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար: Ստեղծել ընտրական գործընթացների մատչելիության համապարփակ ուղեցույց:
- Կուսակցություններին/դաշինքներին, ընտրական հանձնաժողովներին, հանրային լրատվամիջոցներին ուղղված հատուկ միջոցառումների իրականացում՝ կանանց, երիտասարդների և ազգային փոքրամասնությունների քաղաքական մասնակցության խթանման համար:
- Տեղամասային հանձնաժողովների նիստերը տեսանկարահանող սարքերը լրացնել տեսաձայնագրող սարքերով: Ապահովել տեսաձայնագրությունների հասանելիությունը ԿԸՀ էլկայքում առնվազն 7 օր:
- Ընտրողներին իրազեկել տեղամասերի և քվեարկության օրվա/ժամի վերաբերյալ՝ SMS հաղորդագրությունների և համայնքային նշանակության վայրերում ցուցակների տեղադրման միջոցով:
- Ամրագրել դիտորդների, վստահված անձանց և ՁԼՄ ներկայացուցիչների առցանց միասնական գրանցման համակարգ, որը կկրճատի ազդեցության հնարավորությունը և կմեծացնի թափանցիկությունը:

- Սահմանել չօգտագործված քվեաթերթիկների դատարկման, հավաքման և պահպանման կարգը:
- Կազմակերպել ընտրատեղամաս մուտքի վերահսկման հստակ մեխանիզմ՝ բացառելու համար այնտեղ գտնվելու իրավունք չունեցող անձանց ներկայությունը:
- Ներդնել թեժ գծով քարոզչության և ընտրական գործընթացների այլ խախտումների վերաբերյալ բողոքներ ընդունելու և արագ արձագանքման միասնական ընթացակարգ:
- Ընտրական հանձնաժողովների անդամների համար նախատեսել վարքագծի կանոններ, որոնք արգելք կսահմանեն նվերներ և/կամ հյուրասիրություն ընդունել ընտրություններին մասնակից քաղաքական ուժերից, թեկնածուներից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից:
- Մշակել և հրապարակել ընտրողների համար ուղեցույցներ, որոնք հակիրճ և մատչելի ձևով կներկայացնեն ընտրողի գործողությունները ընտրական տեղամասում, կազմակերպել իրազեկում:

Այս առաջարկությունների իրականացումը կնպաստի ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վստահության բարձրացմանը, մրցակցության հավասար պայմանների ապահովմանը և ընտրությունների միջոցով ժողովրդավարության գործուն մեխանիզմների հաստատմանը: